ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Մեծարգո նախագահություն,
Հարգարժան հյուրեր, գործընկերներ,

Նոր ուսումնական տարվա նախաշեմին կազմակերպվող մանկավարժների օգոստոսյան ամենամյա խորհրդակցությանը տնօրենների, ուսուցիչների հետ մեկտեղ անթաքույց հույսով են սպասում նաև ծնողներն ու աշակերտները, զանազան կազմակեպություններ, մի խոսքով՝ բոլոր նրանք, ովքեր մտահոգված են մեր երկրի կրթության ոլորտի ճակատագրով: Եվ դա բնական է, քանզի այդ համաժողովում ոչ միայն վերլուծվում, ամփոփվում և գնահատվում են նախորդ ուսումնական տարվա արդյունքները, այլև քննարկվում են համակարգի համար կենսական նշանակություն ունեցող հարցերը և նախանշվում առաջիկա անելիքները:

Որպես ամենից շատ շահառուներ ունեցող ենթահամակարգ՝ հանրակրթական դպրոցն իր մեջ ներառում է տվյալ հասարակությանը բնորոշ գրեթե բոլոր հիմնախնդիրները: Հետևաբար, ինքնին հասկանալի է, որ համակարգում իրականացվող բարեփոխումները միտված են ոչ թե սոսկ կրթության որակի բարձրացմանը, այլև մեր երկրի առջև ծառացած մարտահրավերների հաղթահարմանը, քանզի ներկա դարաշրջանում կրթությունը պետության կայուն զարգացումն ու ռազմավարական նպատակների կենսագործումն ապահովող ամենահուսալի ապավենն ու պատվարն է: Այդ հույժ կարևոր գործընթացներում իր ուրույն և ակնառու տեղն ու դերն ունի նաև Կոտայքի մարզի հանրակրթական համակարգը:

Մարզում գործում են մարզպետարանի ենթակայության 91 հանրակրթական ուսումնական հաստատություններ, որոնցից 59-ը՝ միջնակարգ, 31-ը՝ հիմնական, 1-ը՝ հատուկ /օժանդակ/ և ԿԳ նախարարության ենթակայության 11 ավագ դպրոց, մեկ կրթահամալիր /Աբովյանի /, մեկ ոչ պետական դպրոց/ Նոր Գեղիի/, 5 արհեստագործական ուսումնարան, ինչպես նաև 6 քոլեջ և մեկ ոչ պետական բուհ /Հրազդանի հումանիտար ինստիտուտ/: Մարզի տարածքում գործող <<Փոքր Միեր>> կրթահամալիրը ուսումնական տարվա կեսից փոխել է իր կարգավիճակը և կրթական գործունեության բնույթը: Սեպտեմբերի մեկից իր գործունեությունը դադարեցնում է նաև Նոր Գեղիում գտնվող Նաիրիի ոչ պետական միջնակարգ դպրոցը: 104 հանրակրթական ուսումնական հաստատություններից 39-ը քաղաքային են, 65-ը՝ գյուղական:

Հաշվետու տարում մարզային ենթակայության հանրակրթական դպրոցներում ձևավորվել է 1440 դասարան, որտեղ ուսումնառություն են ստացել 31114 աշակերտ: Նախորդ ուսումնական տարվա համեմատ դասարանների թիվն աճել է 13-ով, իսկ աշակերտներինը՝ 769-ով: ՀՀ ԿԳ նախարարության ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններ են

հաճախել 3541 աշակերտներ: Սովորողների ընդհանուր թիվը մարզի դպրոցներում կազմել է 34655: Առաջին դասարան են հաճախել 3889 աշակերտ: 9-րդ դասարանն ավարտել են 2750 աշակերտներ, իսկ 12-րդ դասարանը՝ 1700: Ըստ նախնական կոմպլեկտավորման՝ այս տարի առաջին դասարան կընդունվեն շուրջ 4000 աշակերտներ: Նկատի ունենալով, որ մարզի 59 միջնակարգ դպրոցներում հիմնական կրթություն ստացած աշակերտներից շատերը, որպես կանոն, իրենց կրթությունը շարունակում են հարազատ դպրոցում և համադրելով վերոնշյալ մյուս տվյալները, կարող ենք ակնկալել, որ այս ուսումնական տարում նույնպես մարզային ենթակայության հաստատություններում սովորողների թվի որոշակի աճ կարձանագրվի: Վերջին տարիների ուսումնասիրությունները վկայում են, որ մարզում աշակերտների արտահոսքի և ներհոսքի տարբերությունը աստիճանաբար նվազում է, իսկ այդ հարաբերակցությունը այլ մարզերի հետ դրական է: Օրինակ՝ 2015-2016 ուստարում այլ մարզեր են տեղափոխվել 386 աշակերտներ, իսկ մեր մարզի դպրոցներ են տեղափոխվել 409-ը:

Դասարանի միջին խտությունը մարզային ենթակայության հանրակրթական դպրոցներում կազմում է շուրջ 20,2 աշակերտ, իսկ առաջին դասարաններում՝ 24,5: Դա նշանակում է, որ մարզում նախորդ տարիների համեմատ առաջին դասարան ընդունվողների առումով կայուն աճ է նկատվում: Այդ են վկայում, ինչպես արդեն նշեցինք, նաև նախնական մոտավոր տվյալները:

Թեև հանրակրթության հիմնական միջին ցուցանիշները համակարգում առկա իրավիճակը բնութագրում են քանակական տեսանկյունից, այնուհանդերձ, նույնիսկ այդ պարագայում դրանցից մի մասի պահպանումը գրեթե անհնար է աշակերտական փոքր համակազմ ունեցող գյուղական դպրոցների համար: Ինչ վերաբերում է քաղաքային հիմնական և գյուղական խոշոր դպրոցներին, ապա այստեղ վիճակը գնալով բարելավվում է: Չնայած այդ ցուցանիշները չի կարելի բավարար համարել, սակայն, համեմատաբար, դրանք բարձր են հանրապետական միջինից և միայն չնչին տոկոսով են զիջում մայրաքաղաքի ցուցանիշներին: Այսպես, օրինակ՝ սովորող-ուսուցիչ հարաբերակցությունը 11,3 է/ հանրապետական միջինը կազմում է 9,4 /:

Տեսչական ստուգումների, աուդիտի և մեր ընթացիկ վերահսկողության արդյունքները վկայում են, որ մարզի հանրակրթական հաստատության տնօրեններից ոմանք դեռևս պատշաճ կերպով չեն տիրապետում կրթության ու իրենց ղեկավարած հաստատության գործունեության կազմակերպմանն առնչվող մի շարք օրենքներին ու նորմատիվ փաստաթղթերին: Չնայած նախորդ տարիների համեմատ նման տնօրենների թիվը նվազել է, սակայն ոլորտում առկա բացթողումները դեռևս իսպառ չեն վերացել: Վերապատրաստման դասընթացներ ավարտած և հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք /հավաստագիր/ ստացած տնօրենը ոչ միայն պետք է իր գործունեության ընթացքում մշտապես ղեկավարվի

օրենսդրական նորմերի պահանջներով, այլև կարողանա լինել ճկուն, բարդ իրավիճակներում ճիշտ կողմնորոշվող, ունենա կառավարման պատշաճ հմտություններ և ունակություններ:

Նկատի ունենալով, որ շուրջ երեք տարի մարզային ենթակայության դպրոցներում տեսչական ստուգումներ չեն եղել, ուստի մեր խնդիրը հիմնականում եղել է հայտնաբերված խախտումների, բացթողումների վերացումն ու շտկումը, ինչպես նաև հետայսու դրանց լիովին բացառումը: Հաշվետու տարում մեր հետևողական վերահսկողության տեսադաշտում ենք պահել հատկապես հաստատութունում իրականացվող գնումների օրինականությունը, տնօրենների կողմից Սովորողների ընդունելության, Ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգերի և այլ նորմատիվ փաստաթղթերի դրույթների պահանջների պահպանումը:

Քանի որ ուսումնասիրությունների արդյունքները առանձին խորհրդակցություններում արդեն քննարկվել են, իսկ բացահայտված բոլոր թերությունները հետևողական աշխատանքի շնորհիվ վերացել են, ուստի դրանց վերստին չենք անդրադառնա: Պարզապես նշենք, որ խախտումներ թույլ տված 15 տնօրենների նկատմամբ կիրառվել են կարգապահական տույժեր:

Մենք, անշուշտ, քաջատեղյակ ենք հաստատության տնօրենների պարտականությունների ողջ ծավալի և դրանց պատշաճ իրականացման հետ կապված մի շարք դժվարությունների մասին, ուստի, համագործակցելով զանազան գերատեսչությունների, կազմակերպությունների և մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների հետ, մեր հնարավորության սահմաններում կարողանում ենք լուծել առկա հիմնախնդիրները: Բայց, դրա հետ մեկտեղ, բացահայտում ենք բացթողումները և համարժեք վերաբերմունք դրսևորում օրինազանցների հանդեպ: Առավել պարսավելին այն է, որ տնօրեններից ոմանք իրենց սխալներից անհրաժեշտ դասեր չեն քաղում և որոշ ժամանակ անց թույլ են տալիս գրեթե նույն խախտումները:

Ցավալի է, որ իրենց կանոնադրական պարտականությունները ոչ պատշաճ իրականացրած և կարգապահական պատասխանատվության ենթարկված տնօրենների շարքում են հայտնվել նաև նրանք, ովքեր հանրակրթության ղեկավարման ասպարեզում զգալի փորձ և քիչ թե շատ հեղինակություն ունեն: Անհարկի ոգևորվելով նախկինում ձեռք բերված հաջողություններով՝ նրանք միամտաբար ենթադրում են, թե կատարելապես տիրապետում են հաստատության ղեկավարման բոլոր օրենսդրական նորմերին ու նրբություններին: Նման հոգեկերտվածք ունեցող տնօրենները պետք է լուրջ հետևություններ անեն, քանզի ներքին գնահատման՝ մեզ համար լիովին նոր մշակույթը, որն արդեն երկու տարի է, ինչ կիրառվում է հանրակրթական ուսումնական հաստատություններում, մենք ինչ երաշխիքով վստահենք նրանց, երբ բավարար կամք չունեն, որպեսզի սեփական անձին անաչառ գնահատական տան: Ինքնին հասկանալի է, որ հաստատության կողմից սեփական գործունեության ինքնավերլուծությունը բավականին

բարդ գործընթաց է, հատկապես, երբ ներքին գնահատման համակարգի առանձին կետեր ու չափորոշիչներ ստիպում են նորովի նայել ինքներս մեզ և էապես վերափոխել տասնամյակներ շարունակ մեր մեջ ձևավորված կարծրատիպերը: Կարծում ենք, որ մեր մարզի տնօրենները կհաղթահարեն այդ դժվարությունները, և հաստատության ներքին գնահատման համակարգի ներդնման վերջնական արդյունքում էլ ավելի կսերտանան ծնող –սովորող - ուսուցիչ – դպրոց - համայնք – լիազոր մարմին կապերը: Ներքին գնահատումը տնօրենների համար պետք է նաև լրացուցիչ խթան հանդիսանա Ազգային վարկանիշավորման ցանկում առավել պատշաճ տեղ զբաղեցնելու: Ի դեպ, հաշվի առնելով նաև ձեր որոշ առաջարկություններ, այդ համակարգում վերջերս ներդրվել է գնահատման, համեմատաբար, նոր մեթոդաբանություն:

Գաղտնիք չէ, որ հաստատության բարձր վարկանիշի ձևավորման գործում հույժ կարևոր դեր ունի նաև նրա ընթացիկ գործունեությունը ղեկավարող տնօրենը: Այդ իսկ պատճառով էլ հաստատության կոլեգիալ կառավարման մարմինը ամենայն պատասխանատվությամբ պետք է վերաբերվի դպրոցի տնօրենի ընտրության գործընթացի կազմակերպմանը: Հաշվետու տարում մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատության գործադիր մարմնի թափուր պաշտոնի համար սահմանված կարգով անցկացվել են 52 մրցույթներ: Ընտրված /նշանակված/ տնօրեններից յոթը / Աբովյանի N 10, Ակունքի, ՔասախիN1, Ձորաղբյուրի, Կոտայքի, Գետամեջի, Աբովյանի մտավոր թերզարգացում ունեցող N 1 հատուկ/ օժանդակ/ այդ պաշտոնը զբաղեցնում են 1-ին անգամ: Արգելի դպրոցի տնօրենը այդ պաշտոնն ստանձնում է հնգամյա ընդմիջումից հետո: Նոր Հաճընի N1 և N3 դպրոցների տնօրենները, նոր ընտրության արդյունքում, փոխատեղել են իրենց պաշտոնավայրերը: Առաջիկայում՝ Սեպտեմբերի 8-ին և 19-ին, տնօրենի թափուր պաշտոնի մրցույթներ կկայանան երկու դպրոցներում / Ծաղկաձորի և Չարենցավանի N5/:

Հարգելի գործընկերներ,

Կրթական արդյունավետ գործունեություն ապահովելու առումով լուրջ մտահոգության տեղիք է տալիս նաև հանրակրթական դպրոցներում աշխատող թոշակառուների խնդիրը: Թեև թոշակառուների շարքում կան մեծ հեղինակություն և մասնագիտական բարձր կարողություններ ունեցող մանկավարժներ, սակայն, գաղտնիք չէ, որ տասնյակ տարիների ընթացքում ձևավորված կարծրատիպերը կամա թե ակամա կաշկանդում են նրանց: Միաժամանակ անառարկելի է, որ սերնդափոխությունը բնական և անհրաժեշտ գործընթաց է: Մեր հորդորն ու պահանջն է տնօրեններին՝ այդ գործընթացն իրականացնել սահուն, իրավական ու բարոյական նորմերի պահանջներին համահունչ և հավատարիմ մնալ մեր մարզում ընդունված

ավանդույթին ու կենսաթոշակառուներին վաստակած հանգստի ճանապարհել՝ նրանց ավանդին արժանի հանդիսավոր արարողությամբ:

Ուսուցիչների մասնագիտական որակավորման շարունակական կատարելագործման ոլորտում առկա խնդիրները լուծելու և նրանց մեթոդական օգնություն ցույց տալու հարցում զգալի դեր ունեն կատարելու վերապատրաստման դասընթացները, որոնք իրականացվում են Կրթության ազգային ինստիտուտի և նրա մարզային մասնաճյուղի կողմից: Յուրաքանչյուր տարի վերապատրաստվում են հաստատության մանկավարժների մեկ հինգերորդը: Հաշվետու տարում վերապատրաստվել և ատեստավորվել են 423 ուսուցիչներ:

Վերապատրաստումն, անշուշտ, հույժ անհրաժեշտ է մանկավարժի կատարելագործման համար: Սակայն ոչ մի կրթական դասընթաց, նույնիսկ ամենակատարյալը, չի կարող կյանքի կոչվել, եթե ուսուցիչն ինքը չունի ստեղծագործական վառ երևակայություն, մասնագիտական բարձր հմտություններ և ապավինում է միայն դասընթացներում ստացած գիտելիքներին: Ինքնին հասկանալի է, որ մեր կրթական համակարգը պետք է անընդհատ կատարելագործվի, դառնա արդի պահանջների ոգուն համահունչ: Այնուհանդերձ, ժամանակին համընթաց առաջ շարժվելիս, պետք է միանշանակ ընդունենք, որ ուսուցման նոր տեխնոլոգիաները երբեք չեն կատարելու և չեն էլ կարող կատարել այն առաքելությունը, որն ի վերուստ վերապահված է ուսուցչին: Այսօր, առանց վարանելու, կարող ենք փաստել, որ մեր մարզի մանկավարժներից շատերը, անընդհատ կատարելագործելով իրենց մասնագիտական ունակությունները, ոչ միայն հաջողությամբ են հանդես գալիս տարբեր պատասխանատու ստուգատեսերում, այլև բարձր հեղինակություն են վայելում հանրության շրջանում: Նախորդ տարվա հաշվետու զեկուցման մեջ մենք ցավով փաստեցինք, որ օգոստոսյան խորհրդակցության նախօրեին ստացված տվյալներով մարզում կրթության որակավորման 1-ին աստիճանի տարակարգ ունեն ընդամենը 33 մանկավարժներ. մարզային ենթակայության դպրոցների 19 և ավագ դպրոցների 14 ուսուցիչներ: Մենք նաև նշեցինք, որ այլ մարզերի հետ համեմատած, այդ ցուցանիշը ամենևին չի արտացոլում մեր ուսուցիչների իրական ներուժը: Հույս հայտնելով, որ մարզի մանկավարժները համապատասխան հետևություններ կանեն, և շատ շուտով տարակարգ ունեցողների թիվը զգալիորեն կաճի, մենք միաժամանակ այդ ուղղությամբ բացատրական աշխատանք կատարեցինք և խորհրդատվական աջակցություն ցույց տվեցինք հաստատության տնօրեններին ու մանկավարժներին: Հիմա կարող ենք փաստել, որ այդ ասպարեզում որոշակի առաջընթաց է արձանագրվել: Եթե չորս տարվա ընթացքում տարակարգ ունեին ընդամենը 33 ուսուցիչներ, ապա հաշվետու տարում նման որակավորում ստացել են 44-ը: Այլ խոսքով՝ տարակարգ ունեցող մանկավարժների թիվն աճել է ավելի քան 133 տոկոսով: Ներկայումս

մարզի 77 ուսուցիչներ / որոնցից 44-ը մարզային ենթակայության դպրոցների մանկավարժներ/ ունեն որակավորման առաջին աստիճանի տարակարգ: Ուրախալի է, որ նման տարակարգ ունեցող հաստատությունների շարքում են նաև գյուղական փոքր դպրոցները / Կաթնաղբյուրի, Սարալանջի, Ջրառատի/: Այդ ասպարեզում համեմատաբար բարվոք են Գառնիի, Եղվարդի, Հրազդանի N1 ավագ, ինչպես նաև Հրազդանի N 14 հիմնական դպրոցների ցուցանիշները: Առայժմ ավելի բարձր՝ 2-րդ աստիճանի տարակարգ ունեն ընդամենը երկու ուսուցիչներ. Գայանե Կոստանդյանը / ինֆորմատիկա, ֆանտանի միջնակարգ/ և Լարիսա Հարությունյանը /պատմություն, Նոր Հաճընի N1 հիմնական / դպրոցներ: Հուսով ենք, որ հաջորդ տարի առաջին աստիճանի տարակարգ ունեցող ուսուցիչների թիվը առնվազն երկու անգամ կավելանա:

Գերազանցության մեդալակիրների, բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվողների, հանրապետական օլիմպիադաներում և զանազան մրցույթներում նվաճած դիպլոմների թիվը ևս կարևորվում է դպրոցների շահառուների կողմից, ուստի անդրադառնանք նաև այդ ցուցանիշներից մի քանիսին:

Թեպետ նախորդ տարվա համեմատ / 24 դիպլոմ /, հաշվետու տարում առարկայական օլիմպիադաների արդյունքները փոքր ինչ նվազել են, այնուհանդերձ, դրանք ևս կարելի է համարել գոհացուցիչ, քանի որ մաթեմատիկայի և մի շարք բնագիտական առարկաների օլիմպիադաներում մեր դպրոցականները մրցակցում են խորացված ուսուցում անցնող հատուկ դպրոցների սաների հետ: Այս տարի մեր դպրոցականների նվաճած 20 դիպլոմներից երեքը 1-ին կարգի են, վեցը՝ երկրորդ, 11-ը՝ 3-րդ կարգի: Գովասանագրերի թիվը նույնպես 11 է: Դիպլոմների ավելի քան մեկ երրորդը / յոթ դիպլոմ, որից երկուսը՝ 1-ին կարգի/ նվաճել է Մեղրաձորի միջնակարգ դպրոցը: Ինչպես նախորդ, այնպես էլ այս տարի այդ դիպլոմները հիմնականում <<Հայոց եկեղեցու պատմություն>> և <<Հայոց պատմություն>> առարկաներից են: Դիպլոմակիր սաներ ունեն նաև Աբովյանի N 10, N4, Հրազդանի N10, N13, N1, N12, N7, Քաղսիի, Պռոշյանի և Նոր Հաճընի ավագ դպրոցները: Չնայած <<Նախնական զինվորական պատրաստություն>> առարկայի հանրապետական օլիմպիադայում մեր մարզի հավաքականը մրցանակային տեղ չի գրավել, սակայն <<թեստային առաջադրանքների կատարում>> և << նոնակի նետում նշանակետին>> մրցաձևերից հաղթող են ճանաչվել մեր դպրոցականները:

Ասմունքի մանկապատանեկան հանրապետական մրցույթում 1-ին մրցանակի է արժանացել Նարե Ամյանը / Հրազդանի N8 դպրոց /, իսկ Վարդան Մարգարյանը / Հրազդանի N14 դպրոց / դարձել է <<Երգը բարեկամության կամուրջ է>> փառատոնի դափնեկիր: Բարձր նվաճումների են հասել նաև մարզի մանկավարժները: Գիտության և մշակույթի Ռուսաստանյան կենտրոնի

կողմից անցկացվող << Ռուսաց լեզվի տարվա լավագույն ուսուցիչ>> հանրապետական 8-րդ մրցույթում 1-ին տեղն է գրավել Քնարիկ Բուբուշյանը /Հրազդանի N 9 դպրոց/:

Կրթության որակի և մակարդակի կարևոր չափանիշ է նաև պետական ավարտական և ընդունելության միասնական քննությունների ժամանակ շրջանավարտների, հատկապես՝ դիմորդների ստացած գնահատականները: Այս տարվա 1688 շրջանավարտներից միասնական քննություն են հանձնել 778 -ը, որոնց շուրջ 98 տոկոսը ընդունվել են բուհեր:

Խորհրդակցության հարգարժան մասնակիցներ,

Ինքնին հասկանալի է, որ կրթական պատշաճ գործունեություն իրականացնելու առումով շահեկան վիճակում են գտնվում այն հաստատությունները, որոնք լիովին հիմնանորոգված են, ունեն անհատական ջեռուցման համակարգ, բավարար սանիտարահիգիենիկ պայմաններ, ապահովված են ժամանակակից տեխնոլոգիաներով, լաբորատոր սարքավորումներով և անհրաժեշտ գույքով: Ներկայումս մեր ենթակայության 91 դպրոցներից 38-ը հիմնանորոգված են, 27-ը վերանորոգված են մասնակի, իսկ մնացած 26-ը վերանորոգման կարիք ունեն: Անհատական ջեռուցման համակարգով ապահովված են 74 դպրոցներ, իսկ 17-ը ջեռուցվում են էլեկտրական ջեռուցիչներով և վառարաններով: Իրավիճակը բարվոք է նաև տեղեկատվական նոր տեխնոլոգիաների ներդրման առումով: Բոլոր հանրակրթական հաստատություններն ապահովված են համակարգիչներով և ինտերնետ կապով: Դպրոցների հետ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է <<Մալբրի>> համակարգով: Գործարկվել են նաև դպրոցների կայքէջերը:

Մարզի հանրակրթական հաստատություններում առկա խնդիրներին ծանոթանալու և դրանք առավել արդյունավետ լուծելու նպատակով Կոտայքի մարզպետ Կարապետ Գուլոյանը համայնքային շրջայցերի ժամանակ եղել է մարզի գրեթե բոլոր հանրակրթական դպրոցներում: Հաստատությունների անձնակազմի հետ կայացած հանդիպումների ընթացքում քննարկված հարցերի մի մասը արդեն լուծում է ստացել, իսկ որոշ հարցերի լուծումն էլ ընթացքի մեջ է:

Առաջին դասարան հաճախող մարզի երեխաների համար մեկնարկային հավասար հնարավորություններ ստեղծելու նպատակով՝ այն համայնքներում, որտեղ նախադպրոցական հաստատություններ չկան, կամ տարիներ շարունակ չեն գործել կամ էլ՝ գերբեռնված են, <<Կրթության որակ և համապատասխանություն>> վարկային ծրագրի շրջանակներում համապատասխան գործունեություն են իրականացրել 22 նախակրթարաններ /ընդգրկված սաների թիվը՝ 923 /:

Հաշվետու տարում մարզի 11 հանրակրթական հաստատություններում 130 աշակերտներ ստացել են ներառական կրթություն: 2016 թ.-ին կրթության առանձնահատուկ պայմանների կարիք է վկայագրվել 110, իսկ այս տարվա օգոստոսի 25 դրությամբ՝ 19 երեխաների:

ՀՀ կառավարության և ՄԱԿ-ի <<Պարենի համաշխարհային ծրագրի>> կողմից իրականացվող <<Դպրոցական սնունդ>> ներդրումային ծրագրով մարզի 39 դպրոցների 6280 աշակերտ ապահովվել է ամենօրյա տաք սնունդով:

Գաղտնիք չէ, որ դաստիարակությունը կրթական գործունեության անբաժան և, թերևս, ամենակարևոր մասն է: Դա ռազմավարական լուրջ նշանակություն ունի հատկապես մեզ համար, քանզի ճակատագրի բերումով մենք հայտնվել ենք տարբեր քաղաքակրթությունների խաչմերուկում: Հետևաբար, մեր ազգային- հոգևոր նկարագրին և մեր դավանած հիմնարար արժեքներին սպառնացող բոլոր մարտահրավերներին առավել արդյունավետ դիմակայելու համար մենք պարտավոր ենք համակ ուշադրության և հոգածության կենտրոնում պահել մատաղ սերնդի ռազմահայրենասիրական, հայրենագիտական, բարոյական, գեղագիտական, ֆիզիկական և քաղաքացիական դաստիարակությունը:

Այդ գործընթացներում առանձնահատուկ նշանակություն ունեն պետական, ազգային և եկեղեցական տոներին, հիշատակի օրերին, զոհված ազատամարտիկներին, նշանավոր գործիչների հոբելյաններին նվիրված միջոցառումները, էպոսասացության, աստունքի, երգ ու պարի և այլ մրցույթ- փառատոները, ռազմամարզական և դպրոցականների հանրապետական մարզական խաղերը, << ՀՀ Ազգային ժողովի գավաթի >> խաղարկության մրցումները, <<Պատանի երկրապահ>> ակումբների ձևավորումը, տարածքային զինկոմիսարիատների և զորամասերի հետ համատեղ իրականացվող զանազան միջոցառումները, որոնց ակտիվորեն մասնակցում են մարզի բոլոր հանրակրթական դպրոցները: Հաշվետու տարվա ընթացքում կայացած պատասխանատու մարզական ստուգատեսերում ակնառու հաջողությունների են հասել հատկապես Գեղաշենի, Եղվարդի N3, Քաղսիի և Չարենցավանի ավագ դպրոցները: Առանձնահատուկ դրվատանքի է արժանի Գեղաշենի դպրոցը, որի ֆուտբոլի հավաքականը, որպես հանրապետության կրկնակի չեմպիոն, մասնակցել է Չեխիայում կայացած դպրոցական թիմերի աշխարհի առաջնությանը: Թեպետ Գեղաշենի թիմին չի հաջողվել մրցանակային տեղ գրավել, սակայն, մրցաշարի կանոնակարգի համաձայն, մեր ազգային մշակույթը լավագույնս ներկայացնելու համար արժանացել է հատուկ մրցանակի: Ի դեպ, Հայաստանի և Ավստրիայի կրթության գերատեսչությունների միջև կնքված համաձայնագրի շրջանակներում, այս տարի Գեղաշենի դպրոցում ներդրվել և իրականացվում է գերմաներեն լեզվի դասավանդման հետ կապված հայ- ավստրիական միջազգային կրթամշակութային մի նոր, ուշագրավ ծրագիր:

Հարգելի գործընկերներ.

Ինչպես հասարակական կյանքի յուրաքանչյուր ոլորտ, հանրակրթությունը ևս չի կարող անհրաժեշտ առաջընթաց ապահովել առանց շարունակական բարեփոխումների: Հաշվետու տարում հանրակրթության համակարգում ներդրված նորամուծությունների շարքում առավել արմատական մոտեցում կարելի է համարել Ավագ դպրոցի 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակում ուսումնական գործընթաց կազմակերպելու նախկին կարգը վերանայելու, այդ կիսամյակում ուսումնասիրելու համար շրջանավարտների հայեցողությամբ նախասիրած առարկաներ և պետական ավարտական քննություններ ընտրելու նոր կարգը:

Անկեղծ ասած, դրա իրականացումը սկզբնական շրջանում թվում էր բավականին բարդ, իսկ աշակերտական փոքր համակազմ ունեցող դպրոցների համար՝ գրեթե անհնար: Սակայն նախարարության և մեր մասնագետների կողմից հաստատության տնօրեններին ցուցաբերած խորհրդատվական աջակցության ու լրացուցիչ պարզաբանումների արդյունքում այս ծրագիրը ևս մարզում իրականացվեց նոր կարգի պահանջներին համահունչ: Իսկ թե որքանով է տվյալ նորամուծությունը եղել արդյունավետ, առայժմ դժվար է ասել, քանզի ամեն մի բարեփոխման արդյունքները գնահատելու համար որոշակի ժամանակ և հատուկ ուսումնասիրություններ են անհրաժեշտ: Այնուհանդերձ, կարծում ենք, որ այդ նորամուծությունը, որպես փորձնական ծրագիր, նախապես պետք է ներդրվեր առանձին գործող ավագ դպրոցների համակարգում, ապա նոր, վերլուծելով փորձնական ծրագրից ակնկալվող արդյունքները, աստիճանաբար կիրառվեր նաև մյուս դպրոցներում: Այն, որ 12-րդ դասարանում, հատկապես 2-րդ կիսամյակում, իրականացվող կրթական ծրագիրը վերանայման կարիք ունի, աներկբա է: Սակայն, չպետք է մոռանալ, որ հանրակրթության նպատակը միայն շրջանավարտներին ընդունելության քննություններին նախապատրաստելը չէ: 12-րդ դասարանի 2-րդ կիսամյակի ուսումնական ծրագիրը, անշուշտ, պետք է էապես բարեփոխվի և ուսումնասիրվող առարկաների քանակը անպայման պետք է նվազեցվի: Սակայն, կարծում ենք, որ պետական ավարտական երեք քննությունները/ հայոց լեզու, հայոց պատմություն, մաթեմատիկա/, ինպես նաև ֆիզիկական կուլտուրա և նախնական զինվորական պատրաստություն առարկանները պետք է պարտադիր ուսուցանվեն 2-րդ կիսամյակում: Հույժ կարևորում ենք նաև սովորողների համակողմանի դաստիարակությանը միտված հայրենաճանաչողական էքսկուրսիաներն ու արշավները:

Կարծում ենք, ինչպես այս, այնպես էլ հանրակրթության ոլորտում իրականացված և նախատեսվող մյուս փոփոխություններին / հաստատության կոլեգիալ կառավարման և գործադիր մարմինների որոշ լիազորությունների համապատասխանեցում <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> և <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքներով

սահմանված դրույթներին, մասնավորապես՝ հաստատության խորհրդի կազմում տնօրենի հետ անմիջական ազգակցական կապ ունեցող անձանց ընդգրկելու բացառում, հաստատության կողմից իրականացված բյուջետային ծախսերի վերաբերյալ տեղեկատվության հանրային հասանելիության ապահովում, դպրոցներում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների համակարգի ներդրում, դպրոցների օպտիմալացում և այլն/ առավել հանգամանալից կներկայացնի այսօրվա մեր խորհրդակցությանը ներկա Կրթության և գիտության նախարարի տեղակալ պարոն Սահակյանը: Կուզենայի նաև հավելել, որ գալիք ուսումնական տարին բավականին պատասխանատու է բոլորիս համար: Նախ, ինչպես գիտեք, սեպտեմբերի 1-ից 12-ամյա կրթությունը դառնում է պարտադիր: Այսինքն՝ 9-րդ դասարանն ավարտելուց հետո սովորողն իր կրթությունը պետք է շարունակի ավագ դպրոցում կամ էլ միջին ու նախնական մասնագիտական հաստատություններում: Այս ուսումնական տարին նաև խորհրդանշական է, քանզի առաջին անգամ մեր դպրոցների շրջանավարտների փաստացի ուսումնառությունը կազմելու է 12 տարի:

Մեր տնօրենների հորդորում եմ առանձնահատուկ ուշադրություն դարձնել առաջին դասարանցիների ընդունելության գործընթացի պատշաճ կազմակերպման վրա: Երբեմն ծնողները խուսափում են իրենց երեխային դպրոց ուղարկել՝ պատճառաբանելով, թե երեխան դեռ փոքր է, 6 տարին դեկտեմբերի վերջերին նոր լրանալու է: Նման դեպքերում անհրաժեշտ է ծնողների հետ լուրջ բացատրական աշխատանքներ տանել:

Օգտվելով պատեհ առիթից՝ ցանկանում ենք պարոն Սահակյանին ներկայացնել նաև որոշ առաջարկություններ և մտահոգություններ.

<<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքով 2018 թվականի օգոստոսից միջին մասնագիտական կրթություն ունեցող ուսուցիչներին այլևս չի թույլատրվելու դասավանդել դպրոցում: Մարզի հեռավոր գյուղական դպրոցների մեծ մասում <<կերպարվեստ>>, <<տեխնոլոգիա>>, <<երգ- երաժշտություն>> առարկաները դասավանդում են միջին կամ ոչ մասնագիտական կրթությամբ ուսուցիչներ: Քանի որ այդ առարկաների դասաժամերը բավականին քիչ են, այդ իսկ պատճառով էլ թափուր տեղերի համար հայտարարված մրցույթներին ոչ ոք չի մասնակցում: Առաջարկում ենք՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի՝ համատեղությամբ կատարվող աշխատանքի բնույթի սահմանման և <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի առանձին դրույթներում համապատասխան փոփոխություններ կատարել, որպեսզի բարձրագույն մասնագիտական կրթությամբ ուսուցիչը, առանց սոցիալական երաշխիքների սահմանափակման, կարողանա համատեղության կարգով աշխատել մի քանի դպրոցներում: Վերոնշյալ խնդիրը կարգավորելու համար, կարծում

ենք, կարելի է նաև ևս հինգ տարով հետաձգել <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի համապատասխան հոդվածով սահմանված բարձրագույն մասնագիտական կրթության պահանջի կիրարկման ժամկետը:

Քանի որ առաջիկայում նախատեսվում է վերանայել հանրակրթության ոլորտը կարգավորող որոշ կարգեր, առաջարկում ենք վերանայել նաև <<Ուսուցչի թափուր տեղի մրցույթի>> կարգի առանձին դրույթներ, հատկապես միևնույն մրցույթի համար <<Կրթություն>> շաբաթաթերթին գումար վճարելու կարգը: Գաղտնիք չէ, որ մեր ուսուցիչներից ոմանք մեկ ամսվա ընթացքում մասնակցում են տարբեր դպրոցներում կայացած բազմաթիվ մրցույթների և հաճախ ճանաչվում հաղթող: Առաջարկում ենք՝ ստեղծել կադրերի ռեզերվ, մրցույթներում հաղթած ուսուցիչներին գրանցել տվյալ ռեզերվում և հատկացնել հատուկ հավաստագիր, որը նրանց թույլ կտա մրցույթների մասնակցել՝ միայն փաստաթղթեր ներկայացնելով:

Հարգարժան գործընկերնե՛ր,

Մենք պետք է ձեռնարկենք հնարավոր բոլոր միջոցները, որպեսզի հաշվետու տարում ձեռք բերված նվաճումները ամրապնդվեն, իսկ բացթողումները՝ շտկվեն և բացառվեն:

Դեռևս պատշաճ մակարդակ չի ապահովում հանրակրթական հաստատությունների մեծ մասում իրականացվող մատենավարությունը: Էական բարելավման կարիք ունի նաև մեր դպրոցների աշակերտական ինքնավարության և կոլեգիալ կառավարման մարմինների գործունեությունը: Խնդիրներ կան նաև դպրոցների լաբորատորիաները, մարզադահլիճները և կաբինետները համապատասխան գույքով և սարքավորումներով ապահովելու գործում:

Մեզանից ամեն ոք պարտավոր է սրբազան պաշտամունք ունենալ Մայրենի լեզվի և մեր ազգային ու պետական խորհրդանիշների նկատմամբ և անձնական օրինակով այդ սերն ու ակնածանքը փոխանցել մեր սաներին: Մի խոսքով՝ խնդիրները շատ են, և դրանց լուծման համար պատրաստակամություն, նպատակասլաց աշխատանք և ժամանակ է պահանջվում:

Օգուստոսյան խորհրդակցության հարգարժա՛ն մասնակիցներ

Շուտով կսկսվի նոր ուսումնական տարին: Այդ կարևոր իրադարձության ու Գիտելիքի և դպրության առաջիկա տոնի կապակցությամբ շնորհավորում եմ ձեզ և կրթության ոլորտի բոլոր աշխատողներին: Մաղթում եմ ամենայն բարիք, անսպառ եռանդ և անխոնջ ու արգասաբեր աշխատանք՝ հանուն մեր անկախ պետականութաան հզորացման, մեր հայրենիքի բարօրության ու մեր դպրության հարաճուն զարգացման:

Թող իրականություն դառնան բոլորիդ ամենանվիրական իղձերն ու երազանքները: